Պարույր Սևակ

Ճարտարապետական ցուցահանդեսում

Մտնում ես ներս:
Նե՞րս ես մտնում կարծես շեմքից ապագայի:
Էկրաններ են պատերն ասես, որոնց վրա, մոտ ու հեռու,
Կինոկադրերն են համրացել այն նկարի,
Որ հայրենի իմ քաղաքի վաղվա օրն է քո դեմ փռում:
Խայտում է սիրտդ անհանգիստ: Խենթ հրճվանքի
Ալիքներն ես կարծես զգում քո տաքացած երակներում:
Շունչ ես քաշում ազատորեն, ասես կուրծքդ երգ է գրում,
Ռիթմիկ մի երգ՝ ազատ չափով, առանց ճնշիչ բռնահանգի:
Կա՞նգ առ այստեղ: Այստեղ բոլորն են կանգ առնում:
Տե՛ս տողանցող այս շենքերը և աշտարակն այս նիզակվող:
Դու կանգնած ես Երևանի վաղվա շքեղ կայարանում,
Ես այս՝ սրահն է հյուրընկալ,
Որ հյուրերին ձեռքով անում
Մոտ է կանչում իր երկնաքեր աշտարակով:
Այսօր սակայն
Նույնիսկ շքեղ կայարանում
Գնացքը քո ծով հրճվանքի
Կանգ է առնում չափազանց քիչ.
Ձգում է քեզ իբրև մագնիտ
Եվ հայացքդ չքնաղ տեսքին է իր գամում

Ստադիոնը «Դինամո»-ի:
Այնտեղ, նայի՛ր
Ոչ ֆուտբոլի խաղ կա այսօր, և ո՛չ մրցում.
Տուֆքարի մեջ լոկ խաղում են ճառագայթներն արեգակի,
Եվ զարդերն ու խոյակներն են շքամուտքի վրա մրցում:
Ահա և նոր Ակադեմիան,
Ուր մեր անցյալ պատմությունը
Ազատվում է իր կեղևից փոշեթաթախ,
Ուր միգամած ոլորտներում
Աստղերի լույս գաղտնիքներն են դեռ բաց անում,
Եվ ուր սերմը միչուրինյան այգիների՝ հասունանում
Եվ աճում է նախ՝ մտքի մեջ,
Ապա՝ մեր լուրթ երկնքի տակ...
Շենքե՛ր, շենքե՛ր գեղաքանդակ,
Եվ կամարնե՛ր աղեղնաձև կորընթարդով,
Եվ փողոցնե՛ր, պողոտանե՛ր ճառագայթող,
Գործարաննե՛ր, ֆաբրիկանե՛ր, որոնց մարկա՛ն
Վաղը պիտի իմ մայրենի լեզվով խոսի
Վերածնված իմ եզերքի աննախադեպ կյանքի մասին,-
Եվ, վերջապե՛ս,
Իբրև լույսի, շնչող հույսի գրավական՝
Դղյակի պես ծանր նստած կայանն ահա Գյումուշգէսի...
...Կինոկադրերն են փոփոխվում արագորեն:
Ահա վաղվա Ալավերդին,
Ահա Վեդի՛ն,
Արտաշա՛տը, Դվի՛նն ահա, որոնք հիմա հպարտորեն
Բարձրանում են մեր կապուտակ երկնքի տակ՝
Պատմությունից ժառանգելով միայն իրենց անունը թանկ...
Խայտում է սիրտը անհանգիստ.
Խենթ հրճվանքի

Ալիքներն ես կարծես զգում քո տաքացած երակներում,
Շունչ ես քաշում ազատորեն - կարծես կուրծքդ երգ է գրում՝
Ռիթմիկ մի երգ՝ ազատ չափով, առանց ճնշիչ բռնահանգի:

18.IX.1949թ.
Երևան